

Դատավորը «ոչ պատշաճ» որակեց ոստիկանության կողմից իրենց պարտականությունների կատարումը, բայց բավարարեց նրանց միջնորդությունը

ՀՀ վարչական դատարանի դատավոր Ադասի Դարբինյանի կողմից քննության է առնվում «Կոմիտաս 5-ի» գործով քաղաքացիական ակտիվիստ Վարդան Հակոբյանին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով ոստիկանության Շենգավիթի բաժնի հայցադիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը: «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան կազմակերպությունը հակընդդեմ հայց էր ներկայացրել պատասխանողի անունից, որը դատարանը վերադարձրել էր՝ պետտուրք չվճարելու պատճառաբանությամբ: Այնուհետև բողոք է բերվել Վարչական վերաքննիչ դատարան՝ հակընդդեմ հայցը վերադարձնելու մասին որոշման դեմորը մերժվել է: Պատասխանողի վճռաբեկ բողոքն էլ վարույթ չի ընդունվել, և գործն ստացվել է Վարչական դատարան, ու նշանակվել է դատաքննություն:

Սույն թվականի սեպտեմբերի 5-ին կայացած դոնբաս դատական նիստում Վարդան Հակոբյանի ներկայացուցիչ, «Իրավունքի Եվրոպա միավորում» կազմակերպության իրավաբան Սերգեյ Գրիգորյանը միջնորդեց դատարանին՝ թույլատրել դահլիճում գտնվող լրագրողին տեսաձայնագրել դոնբաս նիստը: «Հաշվի առնելով թեկուզ և այն հանգամանքը, որ նիստերի դահլիճը տարողունակության առումով շատ փոքր է, իսկ լայն հասարակական զանգվածներին հասանելիության համար կարևոր է, որ լուսաբանում իրականացվի, բացի այդ, լրատվության միջոցների ներկայացուցիչները հասարակության կողմից, ասպես ասած, հանրային հսկիչներ են (նման դիրքորոշում է արտահայտել Եվրոպական դատարանը իր մի շարք վճիռներում), նաև այս հանգամանքից ելնելով՝ պնդում եմ, որ միջնորդությունը բավարարվի»,-իր միջնորդությունը հիմնավորեց պատասխանողի ներկայացուցիչը: Դատավոր Ադասի Դարբինյանը, մատնանշելով Վարչական դատավարության օրենսգիրքը, որ միջնորդությունների, դիմումների քննարկման ժամանակ դատարանը որոշում է կայացնում՝ լսելով նաև մյուս կողմի կարծիքը, նիստի տեսաձայնագրման վերաբերյալ հարցրեց հայցվորի՝ ոստիկանության ներկայացուցչի դիրքորոշումը: Վերջինս, սակայն, դատավորի կողմից ձայնի իրավունք ստանալուն պես խնդրեց հետաձգել նիստը՝ նոր լիազորագիր ներկայացնելու պատճառաբանությամբ՝ ասելով, թե ոստիկանության պետի տեղակալի կողմից տրված լիազորագրի ժամկետը նիստից 2 օր առաջ է լրացել, իրենք էլ իբր շուտ չեն նկատել: Պատասխանողի ներկայացուցիչ Սերգեյ Գրիգորյանը, սակայն, առարկեց ոստիկանի այս անհիմն պատճառաբանությանը՝ միաժամանակ վկայակոչելով Վարչական դատավարության օրենսգիրքը, որը թույլ է տալիս նիստն անցկացնել նաև կողմի բացակայությամբ՝ նրա պատշաճ ծանուցված լինելու դեպքում: Ոստիկանը, իր խոսքով, «մի նկատառում» էլ արեց դատավորին, որ լիազորագիրը տրված էր ոստիկանության պետի տեղակալ Օսիկյանի կողմից, որը տեղափոխվել է, ինչը, նրա կարծիքով, պետք է հաշվի առնի դատարանը նոր լիազորագիր ներկայացնելու համար: Դատավորի ճշգրտող հարցին՝ դիմել է նոր լիազորագիր տվող անձին, իսկ նա չի՝ լիազորել, ոստիկանը պատասխանեց, որ չի էլ դիմել: Պատասխանողի ներկայացուցիչը ոստիկանի այս «նկատառմանն» էլ առարկեց՝ դատավորի ուշադրությանը հրավիրելով, որ այն չի կարող հիմք ընդունվել, քանի որ իրավահաջորդության սկզբունքով պետի բացակայությամբ տեղակալն է իրականացնում նրա պարտականությունները և բացի այս ամենը ոստիկանության ներկայացուցիչը հանդիսանալով հայցվոր կողմ պարտավոր է նիստերին պատրաստված ներկայանալ, իսկ

այն որ հայցվոր կողմը դատարան է ներկայանում պատշաճ լիազորված չլինելով խոսում է ոստիկանական համակարգի ոչ պրոֆեսիոնալիզմի մասին և որպիսի հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ դատական նիստը հետաձգելու համար:

«Խոսքը պետի բացակայության մասին չէր, այլ լիազորողի՝ այլ աշխատանքի տեղափոխվելու մասին էր», - հակադարձեց դատավորը:

«Բոլոր դեպքում էլ նրա լիազորությունները պետք է իրականացվեն, չեն կարող չիրականացվել», - պնդեց իրավաբանը:

Թեև դատավորը ինքն էլ արձանագրեց, որ ոստիկանի՝ առանց պատշաճ լիազորագրի դատական նիստին ներկայանալը և պատճառաբանությունը, որ ժամանակ չի ունեցել նոր լիազորագիր ստանալու, նրա կողմից «պարտականությունների ոչ պատշաճ իրականացում» է, սակայն իր հերթին պատճառաբանելով, թե «դատարանը պարտավոր է ապահովել, որ կողմերը ունենան հավասար հնարավորություններ գործի քննության ընթացքում» և «հաշվի առնելով սույն գործի առանձնահատկությունները»՝ հետաձգեց նիստը՝ հնարավորություն տալով ոստիկանությանը «պատշաճ» ներկայանալ դատարանում: Դատավարությունը տեսաձայնագրելու միջնորդությանը դատարանը որոշեց անդրադառնալ հաջորդ նիստին՝ ոստիկանության կարծիքը լսելուց հետո:

Պատասխանողի ներկայացուցիչը ևս մեկ միջնորդություն ներկայացրեց՝ պարտավորեցնելու հայցվոր կողմին տրամադրել հայցադիմումին կից վարչական վարույթի նյութերը՝ ելնելով դատական իրավահավասարության սկզբունքից, ինչը դատարանը բավարարեց: Անդրադառնալով իր այդ միջնորդությանը՝ իրավաբան Սերգեյ Գրիգորյանը նկատում է, որ ոստիկանության պոզիտիվ պարտականությունների հերթական ոչ պատշաճ կատարման արդյունքում դատական քննության՝ ողջամիտ ժամկետում անցկացման իրավունքն է խոչընդոտվում, ինչը խախտվեց նաև հայցվոր կողմի՝ նիստը հետաձգելու վերոնշյալ միջնորդությամբ: «Ներկայացուցիչը ոստիկանության Շենգավիթի բաժնի իրավախորհրդատուն է, որը լիազորագրի հիման վրա է ներկայացուցչություն իրականացնում: Հանդես եկավ պատճառաբանությամբ, որ իրեն տրված լիազորագրի ժամկետը սպառվել է. սա անընդունելի է: Առաջին հերթին՝ նա հանդիսանում է հայցվոր կողմը, շահագրգիռը, պետք է պատրաստված ներկայանա, նաև, որ ամենաանթույլատրելին է՝ պետական մարմնի՝ ոստիկանության ներկայացուցիչ է, և կարծես թե պետք է անխափան գործի: Գալ և նման պատճառաբանությամբ նիստ հետաձգել՝ անհեթեթ է», - ասում է Սերգեյ Գրիգորյանը:

Տվյալ դեպքում դատարանը բավարարեց հայցվորի՝ ոստիկանության՝ նիստը անհիմն պատճառաբանությամբ հետաձգելու միջնորդությունը՝ մերժելով պատասխանողի՝ քաղաքացու՝ դրա վերաբերյալ առարկությունն ու հիմնավորումները, մինչդեռ առաջնորդվելով Վարչական դատավարության օրենսգրքով, կարող էր նիստն անցկացնել պատշաճ ծանուցված կողմի բացակայությամբ. սրանից չի՞ հետևում արդյոք, որ դատարանը կաշկանդված էր հայցվոր կողմի՝ պետական մարմնի դիրքորոշմամբ: «Ոչ իրավաչափ որոշում կայացրեց դատավորը. կարող ենք նման վարկած առաջ քաշել, կարող էր կաշկանդված լինել, չի բացառվում, հատկապես մեր իրականությունում դա նույնիսկ շատ էլ հավանական է: Քանի որ թույլ է տալիս Դատավարության օրենսգիրքը՝ նիստը շարունակել

առանց կողմի, պիտի հաշվի առնեք սա և մերժեք միջնորդությունը», - պատասխանում է իրավաբան Գրիգորյանը:

03.10.2014թ. շարունակվեց դատական քննությունը: Դատարանը անդրադարձավ նախորդ դատական նիստի ընթացքում ներկայացված միջնորդությանը՝ տեսաձայնագրում իրականացնելու վերաբերյալ: Դատարանը լսելով կողմերին բավարարեց միջնորդությունը և թույլատրեց տեսաձայնագրում իրականացնել:

Այնուհետև պատասխանողի ներկայացուցիչը անդրադարձավ հայցվորի կողմից գործի նյութերը պատասխանողին մինչ այժմ չտրամադրելու փաստին: Հիշեցնենք, որ դատարանը նախորդ նիստով պարտավորեցրել էր հայցվորին որպեսզի վերջինս տրամադրի նյութերը պատասխանողի ներկայացուցչին:

Հայցվորը պնդեց, որ գործի նյութերը ուղարկվել են փոստային առաքմամբ: Ինչպես հետագայում պարզվեց հայցվորը նյութերը ուղարկել էր ոչ այն հասցեով որով պետք է ուղարկեր: Ուշագրավ է այն, որ բազմիցս նշվել է այն ծանուցման հասցեն, որը պետք է օգտագործեք ոստիկանությունը նամակագրության համար:

Ամեն դեպքում, հայցվոր կողմը պարտավորվեց գործի նյութերը տրամադրել առձեռն: Դատական նիստը հետաձգվեց պատասխանողի ներկայացուցչի կողմից գործի նյութերին ծանոթանալու նպատակով:

Ի դեպ, ոստիկանության՝ քաղաքացիներին դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով բազմաթիվ գործերով, որոնցով «Իրավունքի Եվրոպա միավորում» ԻՀԿ-ն ներկայացուցչություն է ապահովում, դատարանի կողմից արգելվում է նիստերի տեսաձայնագրումը, ինչն էլ հրապարակային դատավարության խոչընդոտ է:

Ադրինե Թորոսյան